

Many students think political science is “dry” and “boring”, and politics is just a “dirty game.” “Nothing could be further from the truth,” I said to my students, “Politics affects the way you think, eat, dress, socialize, and work, so it may be worth knowing about. Politics is everywhere in our society.” This is because it deals with some of the most important questions human beings face: How can and should we communicate with others? What the are democratic values all about and to what extent are they important for us? How do political/state institutions work, etc? I hope to get answers to these and similar questions together with my students through the course.

My philosophy of education is that teachers should only open the door of understanding and should not try to put an unlimited amount of knowledge in the students’ soul, like politicians make people follow their ideas. In addition, the professional educator’s job is not to tell the students what they want to hear, but to let the facts speak for themselves and give them the possibility to think and analyze. My approach helped me build a bridge of trust to each of my students: soon I saw their “burning eyes”.

In the middle of the course, I offered my students an evaluation form to fill out. The majority of the students (16 out of 23) strongly agreed that *the course has been interesting and enjoyable*, the rest of the class (7 out of 23) checked “agree” option. Regarding their opinion about *gaining new skills and knowledge* 15 students marked “strongly agree”, and 8 – “agree” option. I was pleasantly surprised that no one from class checked “Neutral”, “Disagree”, and “Strongly disagree” marks for the two above questions. Answering the question, whether *the students would recommend this course to others*, 11 students expressed their strong willingness/eagerness to do so, 10 people from class agreed to suggest to their peers to take this class, and only 2 students possessed the neutral position. One of the most valuable and inspiring facts for me was that 8 students stated that among other strengths of the instructor is “the ability to match students’ needs” and “being concerned with every student in class”.

I have noticed that since the first class, subconsciously, I have been comparing my ATC and YSU students. I did feel the huge divergence between them, which was not a matter of being more or less intelligent, but just being different. And, eventually, I acknowledged that thanks to studying in a new, student-oriented culture, truly stimulating the learning process, that **ATC students have become “free-thinkers”, who are much more motivated and have more expectations than their peers from other universities.** As a result, ATC students are more positive, more optimistic about their future and ready to take leadership roles and make changes in our beloved Armenia.



Now I feel a tremendous sense of responsibility, gratitude, and calling. **This has been a rewarding, renewing, and life-altering experience – one that will serve as a driving force for both my professional and personal development.** At the same time, I believe my entering ATC has been beneficial not only for me but also for my colleagues and students. It is our common aim to strengthen democracy in Armenia and to lessen the gap that still exists between the perception of western values and Armenian mentality in the public and private sectors, international organizations and the government. ○

ազդում է ձեր մտածելակերպի, սովելու, հագնվելու, շփվելու և աշխատելու ձեր կերպի վրա: Քաղաքականությունը առկա է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում»: Ես նրանց բացատրեցի, որ պատճառն այն է, որ քաղաքականությունն առնչվում է մարդկանց հուզող առավել կարևոր հարցերին. ինչպես կարող ենք և պարտավոր ենք հաղորդակցվել միմյանց հետ, ինչ է մշանակում ժողովրդավարական արժեքներ և որքանով են դրանք մեզ համար կարևոր, ինչպես են աշխատում քաղաքական ու պետական հաստատությունները և այլն: Հուսով եմ, իմ ուսանողների հետ մեկտեղ մենք դասընթացի ընթացքում կգտնենք այս և հարակից շատ հարցերի պատասխանները:

Կրթության վերաբերյալ իմ փիլիսոփայությունն այն է, որ դասախոսը միայն դուռ է բացում հասկացողության համար և ոչ թե փորձում ուսանողների հոգիները լցնել անսահմանափակ քանակությամբ գիտելիք՝ ինչպես քաղաքական գործիչներն են փորձում ստիպել մարդկանց հետևելու իրենց գաղափարներին: Բացի այդ, պրոֆեսիոնալ ուսուցչի աշխատանքը ոչ թե ուսանողներին ասելն է այն, ինչ իրենք ուզում են լսել, այլ թույլ տալը, որ փաստերն իրենք խոսեն և նրանց մտածելու ու վերլուծելու հնարավորություն տալը: Իմ այս մտեցման շնորհիվ ես կարողացա վստահություն ստեղծել իմ և ուսանողներիս միջև, և շուտով լսարանում տեսա «այրվող աչքեր»:

Դասընթացի կեսին ես ուսանողների առաջարկեցի լրացնել իմ պատրաստած գնահատման թերթիկը: Ուսանողների մեծ մասը (23-ից 16-ը) հաստատակամորեն համաձայն էին, որ դասընթացը *հետաքրքիր է և հաճելի*, մնացածները նշել էին «համաձայն եմ» տարբերակը: Տասնհինգ ուսանողներ խորապես համոզված էին, որ իրենք *ձեռք են բերել նոր հմտություններ ու գիտելիքներ*, իսկ 8-ը՝ համոզված էին: Ինձ հաճելիորեն զարմացրեց այն փաստը, որ ոչ մեկը չէր արել «Չեզոք», «Համաձայն չեմ» կամ «Հաստատակամորեն համաձայն չեմ» նշումները: Այն հարցին, թե արդյոք իրենք *կերաշխափորեի՞ն այս դասընթացը այլ ուսանողների*, 11 ուսանող հաստատակամորեն դրական պատասխան էին տվել, 10-ը՝ դրական պատասխան, և միայն 2-ն էին ձեռնպահ մնացել պատասխանից: Ինձ համար առավել արժեքավոր ու ոգևորիչ փաստերից մեկն էլ այն էր, որ որպես դասախոսի ուժեղ կողմեր 8 ուսանող նշել էր «ուսանողների կարիքներին հարմարվելու» և «լսարանում յուրաքանչյուր ուսանողի մասին մտահոգվելու» կարողությունը:

Պետք է խոստովանեմ, որ առաջին իսկ դասից սկսած, ենթագիտակցորեն ես համեմատում եմ ԱՌԿ-ի ուսանողներին ԵՊՀ ուսանողներին հետ: Նրանց մեջ մեծ տարբերություն կա. և այդ տարբերությունը ոչ թե մտավոր կարողությունների ավելի կամ պակաս լինելն է, այլ պարզապես անձնապես տարբեր լինելը: Ի վերջո ես գիտակցեցի, որ շնորհիվ նոր, ուսանողամետ կրթական մշակույթի տիրույթում սովորելու իրենց հնարավորության, որը արդարև խթանում է սովորելու գործընթացը, **ԱՌԿ-ի ուսանողները դառնում են ազատ մտածողներ, իրենց ակնկալիքներում նրանք շատ ավելի շահագրգռված են, քան այլ համալսարանների իրենց հասակակիցները:** Հարդյունս, ԱՌԿ-ի ուսանողներն ավելի դրականորեն ու լավատեսորեն են տրամադրված իրենց ապագայի հանդեպ և պատրաստ են առաջնորդի դեր ստանձնելու և դրական տեղաշարժերի հասնելու մեր սիրասուն հայրենիքի կյանքում:

Այսօր ես պատասխանատվության, երախտապարտության և պատվախնդրության մեծ զգացումով եմ համակված: **Իմ աշխատանքն ԱՌԿ-ում շնորհակալ, թարմացնող և կյանքը փոխող փորձություն է, այնպիսի մի փորձություն, որը շարժիչ ուժ կհանդիսա թե իմ մասնագիտական և թե անձնական զարգացման գործում:** Միևնույն ժամանակ հավատացած եմ, որ ԱՌԿ-ի ընտանիքին անդամագրվելու ոչ միայն ինձ համար, այլև իմ ուսանողների ու ԱՌԿ-ի իմ գործընկերների համար օգտակար է՝ Հայաստանում ժողովրդավարությունն ամրապնդելու մեր ընդհանուր նպատակին հասնելու տեսակետից: Չէ որ մեր երկրում դեռևս անջրպետ գոյություն ունի արևմտյան արժեքների ընկալման և հայկական հոգեկերտվածքի միջև, մասնավոր և պետական հատվածների միջև, միջազգային կազմակերպությունների և կառավարության միջև: ○

Productive Visit to Texas A&M University

Alexan Simonyan, the ATC Statistics and Operations Management teacher, spent six weeks beginning January 15 in the Agricultural Economics Department at Texas A&M University. During his stay, Dr. Simonyan did independent research, developed collaborative academic activities, and visited graduate classes in Agricultural Economics. "I was mainly interested in what applied economics classes are doing with statistical methods and so I attended graduate classes and participated in guided study with the Agricultural Economics faculty," Dr. Simonyan said.

He attended the following graduate classes: Agribusiness Analysis and Forecasting taught by Professors Bruce McCarl and James Richardson; Operations Research Methods in Agricultural Economics taught by Bruce McCarl; Applied Econometric Methods in Agriculture taught by Professor Oral Capps; and a Marketing class taught by Professor John Nichols.

Dr. Simonyan studied the Statistical Software, SAS, for Dr. Capps' course and a simulation software, SIMETAR, created by Dr. Richardson. He discussed opportunities of collaboration with the above mentioned professors. In addition, he discussed similar opportunities with Professor David Bessler on applications of Time-Series Analysis methods in price analysis and other areas of agricultural economics, as well as with Professor Ximing Wu on specific topics of Statistics. Dr. Simonyan also contacted the Distinguished Professor of Statistics, Emanuel Parzen, discussing general issues and concepts of statistical science.

Dr. Nichols accompanied Dr. Simonyan in his visit to the National Agricultural Statistics Service Texas Field Office in Austin, where they met with and were guided by the Deputy State Director Bob Garino. Dr. Garino explained the role of their office, as well as data collection and research activities.

The famous Bush Library and Museum at Texas A&M and the Texas Capitol in Austin will also long remain as good memories.

"My visit to Texas A&M was very successful and productive in better understanding of applications of quantitative subjects I am teaching in ATC in the area of Agricultural Economics," Simonyan said, "I also updated my knowledge in applications of statistical software and got many ideas for doing research with the collaboration of colleagues in the AGECE Department at Texas A&M."

Արդյունավետ այց Տեխասի A&M համալսարան

ԱՌԼԿ-ի վիճակագրության և գործառնական կառավարման դասախոս Ալեքսան Սիմոնյանը վեց շաբաթ անցկացրեց Տեխասի A&M համալսարանի գյուղատնտեսական տնտեսագիտության դեպարտամենտում: Այցելության ընթացքում դոկտ. Սիմոնյանը իրականացրեց ինքնուրույն հետազոտական և ակադեմիական գործակցային աշխատանքներ, ինչպես նաև մասնակցեց գյուղատնտեսական տնտեսագիտության հետազոտական դասընթացների:

«Ինձ գլխավորապես հետաքրքրում էին կիրառական տնտեսագիտության բնագավառում վիճակագրական մեթոդների օգտագործումը և գյուղատնտեսական տնտեսագիտության դասախոսների հետ հետազոտական աշխատանքների իրականացումը», - ասաց դոկտ. Սիմոնյանը: Վեց շաբաթում նա մասնակցեց հետազոտական հետևյալ դասընթացներին. «Ագրոբիզ-նեսի վերլուծություն և կանխատեսումներ» (դասախոս՝ պրոֆեսորներ Բրուս ՄքԲարլ և Ջեյմս Ռիչարդսոն), «Գյուղատնտեսական հետազոտությունների գործառնական հետազոտությունների մեթոդներ» (դասախոս՝ Բրուս ՄքԲարլ), «Գյուղատնտեսության կիրառական էկոնոմետրիկական մեթոդներ» (դասախոս՝ պրոֆ. Օրալ Քեփս), ինչպես նաև մարկետինգի դասընթաց՝ պրոֆ. Ջոն Նիքոլզի դասավանդմամբ:

Դոկտ. Քեփսի դասընթացի շրջանակում դոկտ. Սիմոնյանը ուսումնասիրել է SAS վիճակագրական ծրագրային ապահովումը և SIMETAR վերարտադրողական ծրագրային ապահովումը, որոնք ստեղծել է դոկտ. Ռիչարդսոնը: Վերոհիշյալ պրոֆեսորների հետ նա քննարկեց հետագա գործակցության հնարավորությունները: Բացի այդ, նա նման հնարավորություններ քննարկեց պրոֆ. Դեյվիդ Բեսլերի և Խիմինգ Վուի հետ՝ գյուղատնտեսական տնտեսագիտության և վիճակագրության կոնկրետ թեմաների առումով:

Գյուղատնտեսական վիճակագրության ազգային ժառանգության Տեխասի մասնաճյուղ իր այցելության ժամանակ դոկտ. Սիմոնյանին ուղեկցում էր դոկտ. Նիքոլզը: Այնտեղ նրանց դիմավորեց և ընկերակցեց փոխտնօրեն Բոբ Գարինոն, որը բացատրեց իրենց գրասենյակի դերը, ներկայացրեց տվյալների հավաքման և հետազոտական գործունեության իրենց փորձը: Պարոն Սիմոնյանի տպավորիչ այցելությունների ցանկում էին նաև Բուշի հայտնի գրադարանը Տեխասի A&M-ում և Օստին քաղաքում գտնվող Տեխասի Կապիտոլը:

«Տեխասի A&M համալսարան իմ այցելությունը հաջողված ու արդյունավետ էր, - նշեց Ալեքսան Սիմոնյանը, - Այն ինձ հնարավորություն տվեց ավելի լավ ընկալելու ԱՌԼԿ-ում իմ դասավանդած առարկաների ուսուցման հետ կապված որոշակի հարցեր: Ես նաև թարմացրի գիտելիքներս վիճակագրական ծրագրային փաթեթներին տիրապետելու առումով: Ի վերջո, դասընթացներն ինձ մղեցին Տեխասի A&M համալսարանի գյուղատնտեսական տնտեսագիտության դեպարտամենտի հետ հետագա գործակցության բազմաթիվ նոր գաղափարների»: ○



Seminar by Nancy Kavazanjian Impressed ATC

By Ani KIRAKOSYAN
ATC 5

Nancy Kavazanjian, writer, editor, media and market communications specialist from Beaver Dam, WI USA was the lecturer in a regular Friday seminar on March 17. Ms. Kavazanjian shared with pleasure her experience and life as a writer and as a grandchild of Genocide survivors.

Nancy's son and daughter were accompanying her during this first visit to the land of her ancestors. Lecturing at ATC became a motivating part of her short stay in Armenia. In turn, ATC students were very interested in the modern approaches and methods that Nancy taught based on her own solid experience in writing, public relations campaigning, and general market communications.

Students were grateful to Nancy Kavazanjian and ATC Business Ethics teacher, Pam Karg, for inviting her and her children to ATC.



Տպավորիչ սեմինար Նենսի Գավազանջյանի կատարմամբ

ԱՌԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
ԱՌԿ 5



Մարտի 17-ի ուրբաթօրյա սեմինարի բանախոսը ԱՄՆ Վիսկոնսին նահանգից լրագրող, խմբագիր, հանրության հետ կապերի մասնագետ Նենսի Գավազանջյանն էր: Տիկին Գավազանջյանը հաճույքով տեղեկացրեց լրագրողական փորձի, ինչպես նաև և որպես Մեծ եղեռնի վերապրողների թոռնուհու՝ իր կյանքի փորձի մասին:

Նախնիների երկիր իր այս առաջին այցելության ընթացքում Նենսիին ուղեկցում էին որդին և դուստրը: ԱՌԿ-ում դասախոսություն կարդալը դարձավ Հայաստանում իր անցկացրած օրերի առավել հագեցած ու բովանդակալից մասերից մեկը: Իրենց հերթին,

ԱՌԿ-ի ուսանողները մեծապես հետաքրքրվեցին այն ժամանակակից մոտեցումներով ու մեթոդներով, որ Նենսին սովորեցրեց՝ հիմնվելով գրելու, փի-ար արշավի և ընդհանուր շուկայագիտական հաղորդակցությունների սապարեզում իր սեփական փորձի վրա:

Ուսանողները շնորհակալություն հայտնեցին Նենսի Գավազանջյանին և բիզնես էթիկայի իրենց դասախոս Փեմ Զարգին, որի նախաձեռնությունն էր Նենսիին ԱՌԿ հրավիրելը:

Insurance Is a New and Interesting Field

By Narek VARDANYAN
ATC 5




The pleasant face of a recent lecturer at one of our recent Friday seminars looked familiar. It did not take me long to remember that Sona Demirchyan of the Garant Limens Insurance company was in the same high school where I was a few years ago. But the reason I decided to write this short piece is that Sona did a good job presenting to us a field of her study and business that we don't take here at ATC. She demonstrated excellent knowledge.

Ms. Demirchyan presented the types of insurance, situation in the insurance business in Armenia, collaboration with international re-insurers, risk management, agricultural insurance, research needs in this field, and related issues.

The seminar gave us a good idea on this interesting and just emerging industry in Armenia. I think ATC could send a couple of 3rd or 4th-year students to an insurance company for their upcoming summer internship.

Ապահովագրությունը նոր և հետաքրքիր բնագավառ է

ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՌԿ 5



Ուրբաթօրյա վերջին սեմինարներից մեկի բանախոսի հաճելի դեմքը ինձ ծանոթ էր. կարճ ժամանակ անց հիշեցի, որ Գարանտ Լիմենս ապահովագրական ընկերության ներկայացուցիչ Սոնա Դեմիրճյանի հետ սովորել եմ նույն միջնակարգ դպրոցում: Բայց այս համառոտ անդրադարձը գրելու պատճառը ապահովագրական գործի վերաբերյալ Սոնայի ներկայացրած բովանդակալից տեղեկատվությունն է, ընդսին մենք հետաքրքրությամբ ունկնդրեցինք ԱՌԿ-ում չդասավանդվող այս բնագավառի վերաբերյալ դասախոսությունը:

Օրիորդ Դեմիրճյանը ներկայացրեց ապահովագրության տեսակները, ապահովագրական գործի դրվածքը Հայաստանում, միջազգային վերաապահովագրող կազմակերպությունների հետ գործակցությունը, տարատեսակ ռիսկերի գնահատումը, գյուղատնտեսական ապահովագրությունը, բնագավառում հետազոտական աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը և հարակից հարցեր:

Սեմինարը բավարար զաղափար տվեց այս հետաքրքիր և Հայաստանում զարգացման մեկնարկային փուլում գտնվող բնագավառի մասին: Կարծում եմ, երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողներից մեկ-երկուսին կարելի է առաջիկա ամառային պրակտիկական անցկացնելու համար գործուղել Հայաստանի ապահովագրական որևէ ընկերություն:

